Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի
2021թ.մարտի 20-ի թիվ 3 նիստում
Ռեկտոր Ռ. Հակոբյան
«20» 03. 2021թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

(փոփոխություններով)

I. Ընդհանուր դրույթներ

1. Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժինը (այսուհետ՝ ՈԱ բաժին) ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է, որի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԳՊՀ կանոնադրության և սույն կանոնակարգի հիման վրա:
2. ՈԱ բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում, գործունեությունը դադարեցնում է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:
3. ՈԱ բաժնի լիազորությունները սահմանվում են ԳՊՀ կանոնադրությամբ, սույն կանոնակարգով և իրավական այլ ակտերով:
4. Սույն կանոնակարգը ընդունվում, լրացվում, փոփոխվում է ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

II. ՈԱ բաժնի նպատակը, խնդիրներն ու գործառույթները

2.1. ՈԱ բաժնի նպատակն է համակարգել Համալսարանում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի որակի վերահսկման, գնահատման և բարելավման գործընթացները, մշտադիտարկել Համալսարանում իրականացվող կրթական, գիտահետազոտական, ուսումնամեթոդական և հարակից գործընթացների արդյունավետությունը, ապահովել դրանց գնահատման օբյեկտիվությունը և թափանցիկությունը, բացահայտել կրթական միջավայրից ներքին շահառուների և արտաքին շահակիցների բավարարվածության աստիճանը:

2 • 2 • ՈԱ բաժնի խնդիրներն են.

1. ԳՊՀ ՈԱ քաղաքականության և դրա իրականացման մեթոդական, կառուցակարգային և կազմակերպական հիմքերի մշակում, դրանց պարբերաբար վերանայում և բարելավում,
2. ԳՊՀ ուսանողների, դասախոսների կրթական միջավայրից բավարարվածության, ԳՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողների, շրջանավարտների, նրանց ծնողների, գործատուների շրջանում բավարարվածության, թերությունների և խնդիրների բացահայտման, դրանց շտկման գործիքակազմի կիրառում և շարունակական բարելավում,
3. ԳՊՀ-ում դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության վերաբերյալ հարցումների արդյունքների

մշակում, վերլուծություն, առաջարկությունների ներկայացում և բարելավման շարունակական միջոցների ձեռնարկում,
4. Ազգային, տարածաշրջանային և միջազգային ՈԱ գործակալությունների ու բարձրագույն ուսումնական հաստատությունների ՈԱ կենտրոնների հետ կապերի հաստատում և ամրապնդում,
5. Ազգային և միջազգային օրինակելի փորձի ուսումնասիրում և համադրում.
6. Մասնագիտական կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման նպատակով որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապի ապահովում,
7. Կրթության որակի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության ապահովում ներքին շահառուների և արտաքին շահակիցների շրջանում:

2 • 3 • ՈԱ բաժնի գործառույթներն են •

1.ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներում ՈԱ գործառույթների ու ընթացակարգերի իրականացման անհրաժեշտ աջակցության ապահովում և մշտադիտարկում,
2.ՈԱ կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ փաստաթղթերի մշակում և ներդրում,
3.Դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության գնահատմանն առնչվող գործիքակազմի և ընթացակարգերի կիրառում,
4.ԳՊՀ ուսանողների, դասախոսների կրթական միջավայրից բավարարվածության, ԳՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողի, շրջանավարտի, նրանց ծնողների շրջանում բավարարվածության, գործատուների կողմից ԳՊՀ շրջանավարտների մասնագիտական կարողությունների գնահատման գործիքակազմի կիրառում,
5.ԳՊՀ ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետության գնահատման, ինքնավերլուծության և ինքնագնահատման աշխատանքների կատարելագործում և համակարգում,
6.ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկության, դրանցում ուսանողների, շրջանավարտների, դիմորդների, ծնողների, հիմնական գործատուների և արտաքին փորձագետների ներգրավման և նրանց գործուն մասնակցության ապահովում,
7.Մասնագիտական կրթական ծրագրերի ՈԱ ընթացիկ մշտադիտարկման և պարբերական վերանայման գործընթացների իրականացում,
8.ՈԱ բաժնի տարեկան աշխատանքային հաշվետվության և գործողությունների ծրագրի ներկայացում ԳՊՀ գիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանը,
9.Դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմի և ընթացակարգերի մշակում և իրականացում,
10. ԳՊՀ ֆակուլտետների ՈԱ պատասխանատուների հետ համագործակցություն և նրանց աշխատանքներին աջակցում,

11. Որակի ապահովման գործընթացներում ուսանողների ներգրավվածության և իրազեկության աստիճանի բարձրացմանը նպաստում,
12. Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման գործընթացի գնահատման, վերլուծության և համապատասխան զեկույցի պատրաստման և հաջորդող բարելավման գործողությունների պլանավորման ու վերահսկման համակարգում,
13. Համալսարանի ստորաբաժանումների աշխատանքի համակարգում ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրող մարմինների փորձագիտական այցերի ընթացքում,
14. ԳՊՀ-ում ՈԱ միտված բոլոր գործողությունների համակարգում:

III. ՈԱ բաժնի կառուցվածքը և կառավարումը

1. ՈԱ բաժինը ղեկավարում է բաժնի վարիչը, ում աշխատանքի նշանակում և ազատում է ԳՊՀ ռեկտորը:
2. ՈԱ բաժնի աշխատանքներում ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների, ուսանողների ներգրավվածությունն ապահովելու գործընթացներին մասնակցում են ՈԱ ֆակուլտետային պատասխանատուները, Ուսանողական խորհրդի անդամները, ֆակուլտետների ուսանողական խորհուրդների կողմից ներկայացված ուսանողները:
3. ՈԱ բաժնի հաստիքացուցակը սահմանում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ԳՊՀ հոգաբարձուների խորհուրդը:
4. ՈԱ բաժնի վարիչի գործառույթներն են.
4.1. պլանավորում, կազմակերպում և ղեկավարում է ՈԱ բաժնի ընթացիկ գործունեությունը,
4.2. ԳՊՀ գիտական խորհրդում և ռեկտորատում հանդես է գալիս համապատասխան հաշվետվություններով, զեկույցներով, հաղորդումներով,
4.3. ԳՊՀ գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ՈԱ բաժնի աշխատանքային ծրագիրը, նախորդ ուստարվա աշխատանքային ծրագրի կատարողականը,
4.4. իր լիազորությունների շրջանակում նախապատրաստում է զեկուցագրեր, տեղեկանքներ, հաշվետվություններ, առաջարկություններ և այլ գրություններ ու փաստաթղթեր,
4.5. իր իրավասության սահմաններում ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներից ստանում է որակի ապահովմանը վերաբերող տեղեկատվություն,
4.6. իր իրավասության սահմաններում ԳՊՀ գիտական խորհրդին և ռեկտորատին ներկայացնում է զեկույց, առաջարկություններ ՈԱ բաժնի գործունեությանն առնչվող հարցերի, ԳՊՀ համապատասխան ստորաբաժանումների կողմից որակի ապահովմանը վերաբերող աշխատանքների վերաբերյալ,
4.7. պատասխանատու է ՈԱ բաժնի խնդիրների և գործառույթների պատշաճ իրականացման համար:
5 • ԳՊՀ ՈԱ բաժնի մասնագետի գործառույթներն են •

5 • 1 • մասնակցում է ԳՊՀ որակի ներքին ապահովման գործընթացների ծրագրմանը, իրականացմանը և բարելավմանը,

5 • 2 • համագործակցում է ԳՊՀ ֆակուլտետների որակի ապահովման պատասխանատուների հետ,

5 • 3 • համագործակցում է ներքին շահառուների և արտաքին շահակիցների հետ, ուսումնասիրում նրանց բավարարվածությունը ԳՊՀ կրթական ծրագրերից և շրջանավարտների ուսումնառության արդյունքներից,

5 • 4 • իրականացնում է ԳՊՀ ՈԱ բաժնի մասնագետի աշխատանքի նկարագրով նախատեսված այլ գործառույթներ: